

ՊԱՅՄԱՆՔ

Հարկան գինն և Պոլսոյ հոյ 8 ՄԼՃ
Չ Գաւառաց 2 40 ՄԼՃ
Վեցաւանայ և Պոլսոյ 2 4 ՄԼՃ
Չ Գաւառաց 2 5 ՄԼՃ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փոյ
չգանուցման տողը մէկ տնգամի հաւ
մար 3 դուրուշ, երկու տնգամի հաւ
մար 2 դուրուշ, աւելի տնգամներու
համար դատ տակարարութիւն կըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 6 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ միապետականներն այս օրերս նորէն յուզիւ սկսած են, և նորէն փորձեր կընեն միապետութեան վերահաստատութիւնը դիւրացնելու: Օրինաւորապէս նոր պատգամաւորութիւն մը կը զրկեն Շանայօրի կոմսին, որպէս զի ժամանակիս ոգւոյն պահանջմանց համեմատ քանի մը զինուորներ ընել ապրիլ միապետութեան վերահաստատութիւնը յաջող ճանաչու մը մէջ դնեն: Երեսնի օր եթէ այս վերջին փորձն ալ չյաջողի, այն ժամանակ Օրինաւորութեան ճիւղին ժաւանք փարիզի կոմսին պիտի դիմեն և ուղղակի անոր հետ բանակցին: Բայց այս խորհուրդն ալ յաջող չերեիր չատեւուն: որովհետեւ չյաջողութիւնը որ Շանայօրի կոմսին կենդանութեան ժամանակ Օրինաւորութեանց մեծ մասն տնկէ բաժնուի և Օրինաւորութեան հետ միանայ: Ենթադրելով սակայն թէ Շանայօրի կոմսն այս անգամ յանձն առնու քանի մը զինուորներ ընել, դարձեալ դարձին յաջողութիւնն անյաւարտ կընեն: որովհետեւ հարկ կըլլայ այն ատեն որ Մաք—Մահման մարաթաւան իր հրապարակաւ ըրած յայտարարութեանց և տուած խոստումնց դրժելով՝ հրաժարի իր իշխանութիւնէն և ստպալէզը միապետականաց թողու: Իշխանութեան հասնելու համար երգմադրութեան տեսնուած են պատմութեանց մէջ, բայց արդէն ձեռքն ունեցած իշխանութիւնը կամային ուրիշ յանձնելու համար ուխտադրանքներ չեն տեսնուած երբեք:

Մաք—Մահման՝ ոչ միայն այսպիսի տարօրինակ աւատարմութիւն մ'ընենք արամադիր չերեիր, այլ և ընդհանրապէս իր եօթնամեայ իշխանութիւնը կասկածի տակ ձգելու իսկ թողաւութիւն չընեն: հետեւաբար խոստատագրէս որոշած է, կըսեն, դէմ կենալ միապետական վերանորոգմանց փորձերուն, ո՛ր կողմանէ և դէմ, և ասոր ապացոյց կը համարին Վերլին—Սափա գաւառին մէջ հրատարակուած օրինաւորական իւնիօն լրագրին հրապարակի վրայ վաճառումն արգելուիլը, սա միակ պատճառաւ որ յիշեալ լրագիրը Մաք—Մահմանի եօթնամեայ իշխանութիւնը կծու կերպիւ ըննադատած և անոր օրինաւորութիւնը բացարձակապէս ժխտած է:

Շատ հաւանական է որ նոյն խոստութիւնն ի դուրս պիտի դնէ նաեւ ուրիշ օրինաւորական թերթերու դէմ ալ, եթէ միապետութեան վերահաստատութիւնը վտանգանքներ և իր

եօթնամեայ իշխանութիւնը տապալելու դիտմանց բերան և քարոզ ըլլան:

Այսպէս ահա Գաղղիոյ միապետականաց և Մաք—Մահմանի մէջ անհամաձայնութիւնն օր ըստ օրէ կը մեծնայ, և երբոր եօթնամեայ իշխանութիւնը կազմաւորող օրէնքներն ալ հաստատուին, միապետութեան հետամուտներուն դէմ դուրս երբ բարբոսին կը գոցուին և Գաղղիոյ ժողովրդեան մեծ մասին վաւաքը կըլիաւարուի: որովհետեւ սահմանադրապէս հաստատուած եօթնամեայ իշխանութիւնը հանրապետութեան հոմանիշ է: Եթէ, ինչպէս կը յուսացուի, Մաք—Մահման իր եօթնամեայ իշխանութիւնը զօրեղապէս պաշտպանելով՝ միապետական մեքենայութեանց առաջն առնու, միաքերտուն մէջ տիրած կասկածը, յազմունքն ու անստուգութիւնը փարատէ և անդորրութիւնն ու վատահոլութիւնն աղքատ, ժողովուրդն աւելի կընտելանայ հանրապետութեան, և երբոր եօթն տարի ետք Գաղղիոյ կառավարական գրութիւնն իր առժամանակեայ վիճակէն հանելու և վերջնական կերպիւ որոշելու ժամը հասնի, հանրապետութեան մշտնջենապէս յաղթող եղելուն բնաւ տարակոյս չմնար:

Գաղղիոյ Սանի քաղաքին բնակիչներն ուղերձ մը դրկեցին Պ. Թիէրի, յաւ յայանելով թէ աղքատին ժողովոյ մէջ յուզուած ծանր խնդրոյ վրայ լուծիւն կը պահէ և վիճաբանութեան չկառնուիլը:

Պ. Պարթէլի մէջ ինքն—Իէր, Պ. Թիէրի մտերիմ խորհրդակցանք, յանուն Պ. Թիէրի պատասխանելով յայտարարեց թէ երկրին բաղդն որոշելիք սահմանադրական խնդրոյ վրայ բացառելիք վիճաբանութեանց մէջ Պ. Թիէրի վտանգաւոր մասնակցութիւն պիտի ունենայ:

Սպանիոյ մէջ քարոսեանց ապստամբութիւնն այնչափ զօրացած է, որ կառավարութեան զօրութիւնը տկարանալ կ'սկսի անոր առջև:

Սէրրանո մարաթաւան կառավարութեան բոլոր զօրքերն և մինչեւ իսկ սահմանադրութեանը պահպանող զինուորները հետն առած՝ 50000 մարդով քարոսեանց վրայ դնաց, երկար կռիւներով 7—8000 մարդ կորստնցուց և չկրցաւ բան մը շահիլ: քարոսեանք՝ հաւասար զօրութեամբ կը կռուին կառավարութեան զօրաց հետ, և իրենց պատնիշափակ դրից օգնութեամբ անոնց բոլոր ձիւղն ի դուրս կը հանեն:

Հեռագիրը կըլի թէ Սէրրանո մարաթաւան Տոն քարոսի հետ բանակցութեան մտեր է կարգադրութիւն մ'ընելու համար, բայց Տոն

քարոս չէ ընդունել անոր առաջարկած պայմանները:

Ինչ կընան ըլլալ Սէրրանոի առաջարկած պայմանները, քանի որ յաղթութիւն ձեռք բերած չէ. հաւանականաբար տեսակ մ'իրաւախահութիւն երկու ոտխայ մէջ. այս ալ զօրութեանց հաւասարութիւն կ'ենթադրէ. ուստի տարակոյս չմնար որ եթէ կառավարութեան գէնքերը Պիլպաօի առջև նոր ձախողութեամբ մը կընեն, այնուհետեւ անհնար կըլլայ Տոն քարոսի յաղթական ընթացքն արգելու: Արդէն Սպանիոյ քաղաքներէն շատեր, մանաւանդ կղերին աղքեցութեան ներքեւ եղող ժողովուրդներ, պատրաստուած են թեւաբաց ընդունիլ զՏոն քարոս և Սպանիոյ թագաւոր հրատարակել եթէ մեծկակ յաղթութիւն մը ձեռք բերելով Սպանիոյ հարաւային կողմերը քալէ:

Այս պարագաներէն կը տեսնուի որ Սպանիական հանրապետութիւնը հոգեւորաւ տաղանալի մը մէջ է:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Տահիրէ՝ միապետութիւնը վերահաստատելու առաջարկութիւն մը ներկայացուց աղքատին ժողովին՝ 40 երես ժողովանոց ստորագրութեամբ:

Սպանիոյ պառլամենտին Պ. Տիւրիս (Երեսն խմբագիր, յետոյ Դարօնն կայանք քարոսեանց և վերջն ալ Գաղղիոյ ներքին գործոց նախարար), և նոյն պառլամենտի վարչական խորհրդոյն անդամները բանտարկեցան:

Վիեննա 15 ապրիլ
Երեսփոխանաց ժողովը 21 ի դէմ 148 ձայնով որոշեց յանձնաժողով մը քննութեան յանձնել ճիշդութիւնը Աստոր—Հունգարիոյ երկիրներէն արտաքերտու առաջարկութիւնը:

1864 ի փոխառութեան պարգէններուն վիճակահանութեան մէջ առաջին պարգէնը 1965 թիւ 5 տոմսակը շահեցաւ:

Պէրլին 15 ապրիլ
Լէտոնիոյ երկիրներուն անդառնալի վճռով պաշտօնէն ինկաւ:

Մարտի 15 ապրիլ
Թորթիէ գորապետը հոս եկաւ: Քաթալոնիոյ մէջ պատերազմն ստեղծուց զօրութեամբ յառաջ կը տարուի քարոսեանց դէմ:

Քարիւ 16 ապրիլ
Սառգ վալան լրագրաց մէջ նաեւ մը հրատարակելով կը հերքէ Օսմանեան ֆոնտօններուն դէմ եղած քննադատութիւնները:

Աղքատին ժողովոյ լուծման կուսակիցները կը շատնան:

Օրինաւորականք ալ իրենց կողմէ կը յայտնեն թէ աշակերտեանք Պ. Պիլիպի առաջարկած կառավարական կազմաւորութեան դէմ պիտի մարտնչին:

Քարիւ 16 ապրիլ
Գաղղիոյ կառավարութիւնը խրատ տուաւ Պ. Լէսթրի որ հանրապետիւն

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանձն ու ծախքը խմբագրութեան վրայ է: Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր—Տոն քարոսի պիտի ուղղուի, և Պոլսոյ, Պիլիպի, Մաքիսի գրասենեակը:

Ճամբու ծախքը չվճարուած նաեւ ծախ չընդունուիր:

Երեսփոխանաց ժողովին ընդունի, որպէս զի պատճառ չտայ խորհրդին՝ Սուէյշի ջրանցքն ինք բանեցնելու: Վիեննա 16 ապրիլ

Բուլղարի երկաթուղեաց վերջին վիճակահանութեան մեծ պարգէնը՝ Թորթիսաի ծովային հրամանատարութեան գործակալներէն մէկը շահեցաւ:

Քարիւ 16 ապրիլ
Չախակոյմեան կեդրոնին և կառավարութեան մէջ համաձայնութիւնն տնհընար կը համարուի:

Ջրոյց կայ թէ Պ. Տիւրիս նոր Նախարարութիւն մը կազմուի պիտի կոչուի:

Լոնտոն 16 ապրիլ

Օսմ.	Բոնա.	41
Ժոն.	1865	62 1/2
»	1869	50 1/4
»	1871	57 3/4
»	1872	68 3/4

Անգլ. Բոնա. 93

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝ Արշակաւորական կղերաց կուսակալութեան Տէֆթէրտար Սալիս պէյ Մարտինի կառավարիչ անուանեցաւ:

Եգիպտոսէն եկած հեռագրերը կը ծանուցանեն թէ Եգիպտական կառավարութիւնը հինգ միլիոն լիւրայի փոխառութիւն մ'ըրբեր է Եգիպտոսի բնակիչներէն՝ հարկերին ց տոկոսով:

Այսպիսի յաջող փոխառութիւն մը յայտնի ապացոյց է թէ Եգիպտոսի ժողովուրդը կառաւարակ վրտահոլութիւն ունի Բարձր. Խալիվին կառավարութեան վրայ, վատահոլութիւն մը՝ որ Եգիպտոսի վարիւր կը բարձրացնէ Եգիպտոսի առջև: Ուրիշ մէկ օգուտն ալ այս է որ կառավարութեան վճարած տոկոսն երկրին մէջ կը մնայ և դուրս չենեն, հետեւաբար թէ՛ կառավարութիւնն և թէ՛ ժողովուրդը միապէս կը շահին այս փոխառութեամբ:

Թուրքերէն Շարք լրագրին եւ ռամեսայ դադարման պատիժը Բ. Դոնէն շնորհուրով՝ հրատարակութիւնը շարունակել սկսաւ:

Գաղարման պատճառն այս էր որ յիշեալ լրագիրը վսեմ ճէպտեթ փաշայի գրչէն ելած գրքի մը վրայ խօսելով, անոր մէջ Դուրանէն առնուած քանի մը տողերը յիշած էր: Այսպիսի յիշատակութիւն մը լրագրաց էջերուն արգելեալ ըլլալով, եւ ռամեսայ դադարման հրաման եղած էր, բայց յետոյ խմբագրին արւած բացատրութիւններուն վրայ յիշեալ հրամանն ետ ձգուեցաւ:

Հինգշաբթի օրը Կաթոլիկ Հայոց և Հատուկեանց գիւլաւորները Մեծ Եպարքոսին ապարանքը հրաւիրուե-

յան, և կրողն թէ Նորին Բարձրաթիւնն իրաւախօսութեան յորդորն է երկու կողմը, և երեք կամ չորս օր պայմանաւորաբար տուելու է:

Լաւճաւոր նայելով, այսօր երկու կողմն ալ Բ. Գուռն երթալով Պէյլիկ՝ ճիւղն առնել իրենց իրաւախօսութեան պայմանները պիտի յայտնեն, և այս բանակցութեանց արդիւնքն երկուստեք իրար Բարձր. Մեծ-Եղար. քոսին պիտի ներկայանայ:

Ռուսիոյ կառավարութիւնը Բէրայի Բանակով թաղին մէջ Ռուսական հիւանդանոց մը շինելու որոշում տուած ըլլալով, հինգ-չարթի օրը շինութեան սկիզբնաւորութիւն եղաւ ի ներկայութեան մայրաքաղաքի Ռուսական դեսպան վսեմ իր նախկին զօրապետին:

Յունաց Պատրիարքարանը շրջաբերականներ զրկեց բոլոր դաւառաց մետաղաօրէններուն ու եղիսկորայայտ, որպէս զի բոլոր յունական վարժողներուն մէջ առձեռնութիւն լեզուներու մէջ անհրաժեշտ ընելու ջանն:

Երուսաղէմէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Զատիկ տօնը կատարեալ խաղաղութեամբ և բարեկարգութեամբ կատարուել է Ստեղծեաց մէջ:

Երեւոյթի օրը Հաճի Ահմէտ անուն Պարսիկ մը, որ Օսմանեան հրապարակութիւն ընդունած էր, Սուլթան Պայադիտ խանի մը մէջ դաւաճեցանքով մը քարնուեցաւ. քանի մը պարսիկներէ: Ոհրադործները բռնութեամբ ոտիկանութեան դուռը տարուեցան:

Ասկէջ չորս հինգ տարի առաջ Պոլստարալ Մէհմէտ Զաքիւր էֆէնտի անուն տաճիկ վաճառականի մը 16 տարեկան որդին յայտնաբերուեցաւ 1000 լիւրայի չափ ստրկի դուստրի մը հետ, որ մետաքսի վաճառումէ դուրս յայտնուեցաւ ալ իր քով պահած էր էֆէնտի խանը սենեկի մը մէջ:

Հայրը ոտիկանութեան գլխերով տղան փնտռել տուած և մինչև Պաղատաւ, Ռուսիա և Պոլստարա հեռագիր դարկած էր, կապաւորուելով որ թերեւս ստալին առած փախած էր. բայց ամեն խուզարկութիւնը ապարդիւն ելած էին:

Մնացեալ չարթի ոտիկանութիւններն ուրիշ պատճառաւ քանի մը ոհմանքով հարցաքննութեան ենթարկուած միջոցին, քաղած խոտովանութիւններէն յայտնուեցաւ որ յիշեալ պատանին Մէհմէտ խանը թէմալէքի մը տակին նկուղին մէջ ըստ պատանուէր է քանի մը պարսկացի ձեռնօք և մարմինը հոն ջրհորի մը մէջ նետուել է:

Ոհրադործներն անմիջապէս իրենց ալ չորով լեցուցեր են: Պատիկանութիւնն այս խոտովանութիւնը լռելուն պէս մարդ զրկեց ջրհորը բանալ տուաւ և խեղճ պատանին կմախքը մէջէն դատաւ:

Չարագործները բանան են:

ԳՐԱՅԻՆՆԵՐ			
Օսմանեան Բօնաօրիտէն՝ անցեալ շարթիւ մինչև 17/1 և ելնէէ ետեւ՝ այս շարթիւ նորէն ինկաւ:			
Ասոր հակառակ հարեւրին 6 ու փոխառութիւնները վրայ դրին:			
Հոնարայի վրայ փոխառութիւններն ալ աւելի թոյլ է և 11/1 7/8—11/1 1/8 մէջ կը տատանի:			
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԷՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻԷ			
3 ապրիլ՝ ուրբաթ	իրիկուն	46, 3	
6 » »	շաբաթ	առաւօտ	
բացուեցաւ		46,	
կէս օր		43 33	
Կ. Պօլս 3 ապրիլ			
Սօսթիթ մէնէրայի բաժինը		Անդ. լիւր	5,35
« փոխանակութեան »			3,25
Կ. Պօլս Պանքային »			4,28
Քրէտի թէնէրայ »			7,48
Քրէտի Օսթրո-Քրիւք »			2
Երկաթուղեացի »		Յր.	104 1/4
» »		»	73 1/4
Փոխ. 1863 »		»	310
» 1865 »		»	310
» 1869 »		»	253

» 1872 » »	68 1/2
Փոխ. 1873 » »	» 90
ԸՆԴՀԱՆՔ ԳՐԱՅԻՆՆԵՐ	
25 ԱՊՐԻԼ	
Անգլ. ժամ »	444.
Կոստ. ժամ »	88
Իմպերիալ ժամ »	90
Գրք. ժամ »	51, 25
Գրք. ժամ »	—
Կինոյոյ »	404
Պրինս »	423

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Հինգ-չարթի օրը Ամին. Ներսէս Սրբազան Գումբափուր Մայր Եկեղեցին լիանալով համար Պատարագ մատուցանելէ՝ ետեւ. Պաղարաց Էկեղարին այցելութիւնն ընդունեց, որ Զատիկ տօնը շնորհաւորելու եկած էր քանի մ'եղիակոյտաց և աշխարհական երեւելաց հետ:

Ուրբաթ օրն ալ Յունաց Պատրիարքական փոխանորդն ըստ սովորութեան փոխադարձ շնորհաւորութեան եկաւ ի Պատրիարքարան:

Աւերդէ է ըսել թէ այս ընդունելութեանց մէջ Ամին. Ներսէս սրբազան՝ իւր անձնական արժանեաց հետ և ազգին պատիւը փայլեցուց: Նոյն օրը Պարսից վսեմ. դեսպանն ալ իւր թարգմանը շնորհաւորութեան զրկած է Ամին. Տեղապահ սրբազանին:

Լնկիւրիի սովատան խղճալեաց օգնութեան համար գլխավորապէս ազգայնոց կողմէ առատաձեռն նուիրատուութիւնը սկսան:

Վսեմախոհ բարերար մը, որ իր անունը ծածուկ պահելու սովորութիւնն ունի միշտ, հինգ-չարթի օրը փախաբան Մեծ. Գեորգ. էֆէնտիին ձեռնարկ 100 լիւրա զրկեց Շամլեան Յօհաննէս էֆէնտիին, որ անմիջապէս հեռագրով Լնկիւրի հասուց:

Յակոբեան Մեծ. Միքայէլ և Կիւմիւշէրտանեան Մեծ. Տիգրան էֆէնտիներն, որք մարդասիրական գործերու մէջ միշտ առաջին ըլլալու ափիւ բնուորութիւնն ունին, հինգ-չարթի օրին ի վեր իրենց բոլոր գործերը թողուցած՝ անձամբ Հայ վաճառականաց և սեղանաւորաց սենեակները կը պարտին, չուէր կը հաւաքեն, և արդէն 300 լիւրայի մօտ ստակ հաւաքած են, որոյ 200 լիւրան Լնկիւրի զրկուեցաւ հեռագրով:

Պատրիարքարանի կողմէն կադմուած յանձնաժողովն ալ, որոյ Մեծ. անդամաց անուններն յետագայ նամակին մէջ կը տեսնուին, նոյնպէս հանգանակութիւն հաւաքելու ձեռնարկած են:

Ասկէջ զատ փախաբան Մեծ. Գեորգ. էֆէնտին ալ անձամբ հանգանակութիւն հաւաքելու ելած է:

Այս աղիւս փութալանութեանց և անձնութեանց շնորհիւ կը յուսացուի որ քանի մ'աւելի մէջ առնուազն 5—600 լիւրայի դուստր մը կը հասնի Լնկիւրի, և տեղւոյն խղճալի աղբայինը սովամահ մեռնելու վրտանդէն կազաւին:

... Էֆէնտի. Սրբէն ծանօթ է շատերուն այն ձեռնարկութիւնը որ կը տրի Գաղատիոյ ազգայնոց վերայ, և զոր մասնաւոր հեռագիրներէ և քանիցս լրագրաց ուղղուած աղիւսներով նամակներով խոնարհ զգացուց Հայ մը չորհար մտաբեր մնար:

Ազգային վարչութեան կողմէն այն խղճալեաց օգնութեան հասնելու համար ընտրուած և տան անձինքներէ բաղկացած Գանձաժողովն, մի քանի նիստերէ վերջը՝ որոնց մէջ փութաց այս աղետալի կացութեան դարման քի տանելու պարտք:

* Կիրակի առաւօտ արանց համար պատարագած էր:

Կը համարի արդոյ հասարակութեան ձանձնեղ զինքը կազմող անդամները, և ապա հրաւիրել զթափառ հասարակութիւնը, որ ուրիշ անդամներու պէս իւր պարտաւորութիւնը կ'ապրէ իր թշուառաց:

Ահաւորել Գանձաժողովը կազմող անձանց անուանքը:

Մեծ. Գարութիւն էֆ. Գալիստանեան Ատեն. Սինեքերիս » Մանուկեան Գանձ. Գրիգոր » Տօնէկեան Ատենդ. Սերուբէ » Կիւլիշիկեան Գարութիւն » Մարտաւտան Եղիա » Պէյլեքեան Գովհաննէս » Շամլեան Լուիս » Լուիս » Յովհաննէս » Մանուկեան:

Այլ խնդրեմ, ... Էֆէնտի, որ բարեհաճել սոյն երկուստեք ձեր պատուական լրագրոյն մերձակայ մէկ թուոյն մէջ զետեղել, որպէս զի ընթերցողը, իրենց արեւակացոյն աղետեղը վերայ ի դուր շարժելով, յանձնաժողովոյ անդամաց միւս իրենց զինած միջոցին չի զղանա իրենց լուսնայն շնորհիւ, որով նա փաղ ընդ փոյթ կարենայ խղճալեաց ձգնաժամին օգնութիւն հասցնելու, ինչպէս նաև նուիրատու անձանց անուանքը լրագրաց միջոցաւ հրատարակելու:

1874 ապրիլ 5 Մեծ. աղօթարար Կ. Պօլս Կաթաղաճ Գանձաժողովոյ Գաղա Վարդապետ Առտ փախաբան

Գեր. Մեքիմեդեկի վարդապետ Մուրադեանց, որ ինչպէս արդէն ծանուցած ենք, Երուսաղէմայ Միթոնին կողմէ առաքելական պաշտօնով Եւրոպիոյ բոլոր Հայ գաղթականութեանց այցելութեան ելած է, հետեւեալ նամակը կը դրէ մեզ, որոյ մէջ ամեն ճշմարիտ Հայոց ուղարկութեան արժանի կարեւոր և սրտաշարժ տեղեկութիւններ կը տեսնուին:

Յ մարտի 1874 Նաբօրի. Խոտիլա. ... Խմբագիր.

Սուղիւ պէն մի նամակ գրեցի Ձեզ և կը յուսամ թէ արդէն հրատարակած կը լինի: Ներկայ նամակ ալ կը գրեմ Նախիլէն և կը խնդրեմ որ բարեհաճել հրատարակել, կանխաւ ընդունելով անկեղծ շնորհակալութիւնս:

Առաջին նամակի մէջ յայտնած էի, որ պիտի ձանապարհորդեմ ի Չէրնովցի, ի Լէմպերի, ի Դրագով և այլն, մեր օտարագուստ արեւակաց և աղբակցաց այցելութիւն առնելու:

Կատարեցի այս ձանապարհորդութիւնն, թէպէտ և կըցաւ որ ձեռնարկին բարեբեր զրուցութիւնն չընեք ինձ մի առ մի ամեն Հայաբնակ գիւղաքաղաքներ և գիւղեր տեսնել: Սակայն ինչ որ տեսի, այնպիսի խոր տպաւորութիւն ունեցաւ իմ վերայ, որ տակաւին սիրտս կը յուզի և աչքերս կը տամիկան արտասուօք:

Աղիւս բարեկամ, մեք շատ եղբայրներ ունինք Պոլսովինայի, Կաթիլիոյ և Հունգարիոյ մէջ, որոց մեծ մասն թէ և Հայերէն չըլտան, թէ և դաւանութեամբ անընտեալ, բայց տակաւին սիրով կը կրեն ՀԱՅ անունը և կը պարծին Տէրութեան առջև: ՀԱՅ անուամբ ներկայանալ, որոց մէջ կան շատ նշանաւոր անձինք, որք թէ՛ հարստութեամբ և թէ՛ պաշտօնական մեծութեամբ փառաւոր անուն ունին Առաքիւս—Հունգարիոյ պետութեան մէջ:

Գաւառութեան կողմէն կտրելի է երեք կարգի վերածել Հայաստանի այն գաղթական որդիքն, յորոց մի մասն ունի յատուկ Արքեպիսկոպոսարան կամ Պատրիարքարան ի Լէմպերի, Երկրորդ մասն, որ ի թրքմանի վանիս առանձին բաժանումն կ'իլաղմեն և մերթ ընդ մերթ այցելուներ

կընդունին Վիլնի միաբանութենէն: Հունի հայազգի ձին հայկական և յարեւելեան քաղաքացի մէջ կը յաճախէ տեղական եկեղեցիներն, համակերպելով նոցա արարողութեանց: Լէմպերի արքեպիսկոպոսարանն ունի ինն թեմ կամ վիճակ իւր հովուական տեսչութեան ներքև և ընդ նմին յատուկ արտօնութիւններ՝ Հոռովմայ Պապերէն և Աւստրիոյ տէրութենէն շնորհեալ: Ինչպէս սոյն թեմերուն մէջ, նոյնպէս և ի թրքմանի վանիս ժամերգութիւնը Հայերէն լեզուաւ կը կատարուի. բայց թրքմանի վանիոյ մէջ Հայերէն աւելի կը խօսուի քան թէ սոյն թեմերուն մէջ:

Շատ և շատ յաւալի է, որ սոյն գաղթական Հայազգիքն ամենեւին տեղեկութիւն չունին մեր Հայոց կաթիլիկոսութեանց, Պատրիարքութեանց և նոյն իսկ Աղբի վերայ: Կարող եմ ասել, որ սոքա օտարաց չափ անդամ ծանօթութիւն կամ հասկացողութիւն չունին անցեալ և ներկայ Հայութեան վերայ, և պատճառն այն է, որ բացի ժամերգութեանէն, բոլորովին անձանթ են իրենց Հայկական գրականութիւնն և պատմութիւնն: Մինչև անգամ շատերն այնպէս կը կարծեն՝ թէ իրենք միայն Հայ միացած են աշխարհիս վերայ և ուրիշ Հայ չըլկայ բնաւ:

Ահա՛ պատմական տարօրինակ տեսարան մեր ազգին կենաց մէջ: Թողլով սոյն նոր տեսարանի ներկարդիւն այլու ժամանակի և տեղւոյ, պիտի պատմեմ Ձեզ, խիստ համառօտաւ և հարեւանցի, տեսածներս միայն ի Լէմպերի, յորոց ընթերցողը կարող են շատ բան իմաստասիրել:

Ի Չէրնովցի տեսնուեցայ Միտուլիկի Հայազգի Կանոնիկոսին հետ, որ եկեղեցի կը շինէր տեղական Հայոց համար, և խնդրեց յանձնարարական թուղթ Լէմպերի Արքեպիսկոպոսարանի անդամաց միւս վերայ, որպէս զի առաջնորդէ ինձ և ամեն բան ցոյց տայ, ինչ որ կը փափաքէի տեսնել: Կանոնիկոս վարդապետն սիրով կատարեց խնդրս և յանձնարարական տուաւ առ Կանոնիկոսին Ռամաշլան, որ միակ Հայախօսն է Արքեպիսկոպոսարանի մէջ և դանձապետութեան պաշտօն կը վարէ: Երբ հասաւ ի Լէմպերի, խիստ դժայի Ռամաշլանին, բայց դժբաղդարար չգտայ ի տան, ուստի և ստիպուեցայ ամենայն ինչ ինքնին կատարել:

Գնացի ուղղակի Արքեպիսկոպոսին, կանխաւ իմացնելով որ Հայ վարդապետ մի կամի իրեն հետ տեսնուի: Ծնորհալաւ եմ, որ անձամբ դիմաւորեց և սիրով ընդունեց զիս սակայն յաւալին այս էր, որ ոչ Հայերէն գիտէր և ոչ դէթ Յրանսերէն, այլ Լեհերէն և իտալերէն: Գաղտնեցաւ ի հայտնաւ Ռուսերէնով փախաբայ յայտնել իրեն, որ կամի արքեպիսկոպոսարանի, վանքի և կուսաստանի հրանութիւններն տեսնել: Սիրով ցոյց տուաւ ինձ արքեպիսկոպոսարանի հնութիւնքն, որք էին գլխաւորապէս մի գրչագիր հին Աւետարան և իրենց արքեպիսկոպոսական յաջորդութեան բոլոր մեծագործ պատկերներն, նիկօլէն սկսեալ մինչև ինքն, առանձին մեծ դահլիճի մէջ կարգաւ կախուած: Գիտեք արդէն թէ ինչ տպաւորութիւն կարող էր ունենալ իմ վերայ Նիկօլի և իւր յաջորդաց պատկերներու տեսնելուն:

Ինքեցի եկեղեցին և կուսաստանն ևս տեսնել, սիրով ընդունեց ինքեցիս և մարդ մի տուաւ որ առաջնորդէ ինձ, ինքն ևս ուղեկցելով մինչև արքեպիսկոպոսարանի ըստ

Ռուբոյէն Եղնու շահէն-նէրը

፲፱፻፳፱ ዓ.ም. ሰኔ ፳፱ ቀን

20, ԼՂԲՀ-ի փարիզ Քէլեր փողոց 42, և Կ. Պօլիս Եկնի ճամփ փողոց ԹԻԷ 46, 48
Տէրա Ստասիկ, Պ. Ծաննիկ, Օճանիարիկ, Վէլիցիկ, Զեպուհեյլիկ, Քասապեհանիկ,
և Սէրբանիկ զեղարաններ: